ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___»«_____»2024թ. **N-------Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի «Երևան քաղաքի պատվավոր կոչումների և պարգևների մասին» N604-Ն որոշման N1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 50-րդ կետից հանել ««Երևանի քաղաքապետարան» ոսկե կրծքանշան,» բառերը:

2) 51-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«51. «Երևանի պատվավոր քաղաքացի» հուշամեդալը «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» մակագրությամբ ժապավենից կախված հուշամեդալ է, որի դիմերեսին պատկերված է՝ կենտրոնում Երևան քաղաքի զինանշանը պատկերող դրոշմաքանդակը՝ կլոր շրջանի մեջ Հայաստանի 12 մայրաքաղաքները խորհրդանշող գծանշումներով, ձախ կողմում՝ Էրեբունի քաղաքի հիմնադրման սեպագիրը, աջ կողմում՝ Երևանի քաղաքապետարանի շենքի կամարանիստ պատկերը:»:

3) Ուժը կորցրած ճանաչել 52-րդ կետը:

4) 53-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«53. Հուշամեդալը պատրաստվում է արծաթի համաձուլվածքից և ոսկեպատվում է:»:

5) Ուժը կորցրած ճանաչել 54-րդ կետը:

6) Ուժը կորցրած ճանաչել 55-րդ կետը:

7) 58-րդ կետից հանել ««Երևանի քաղաքապետարան» ոսկե կրծքանշանը և» բառերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 604-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով, որ «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչումը Երևան քաղաքի պատվավոր կոչումներից ամենաբարձրն է, անհրաժեշտություն է առաջացել պատրաստելու «Երևանի պատվավոր քաղաքացի» նոր հուշամեդալ: Այն իրենից ներկայացնում է 98մմ երկարությամբ և 90մմ լայնությամբ ուղղանկյուն, որը պատրաստվում է 925 հարգի արծաթի համաձուլվածքից, պրուֆֆ տեխնոլոգիայով և արտադրվում է միայն դրոշմման ճանապարհով: Մեդալն անցնում է հատուկ գալվանական մշակում և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկով: Հուշամեդալը բաղկացած է կախիչից և դրան ամրացած սկավառակից:

«Երևանի պատվավոր քաղաքացի» հին հուշամեդալը շրջանաձև էր և չուներ կախիչ: Հուշամեդալի հետ միաժամանակ, պարգևատրվող անձին հանձնվում էր նաև «Երևանի քաղաքապետարան» կրծքանշանը: Հաշվի առնելով, որ նոր հուշամեդալը կախիչով է, պարգևատրվող անձին հուշամեդալի հետ միաժամանակ «Երևանի քաղաքապետարան» կրծքանշանի հանձնման անհրաժեշտություն չի առաջանում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ, որով կամրագրվի նոր հուշամեդալի բնութագիրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ